ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ

29.08.2019 10:07

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի փորձագիտական խմբի (կազմում ներգրավված էին նաև ԱՄՆ փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ) առաջարկների հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի աշխատանքային խումբը կազմել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այդ թվում՝ հավելվածի) փոփոխությունների և լրացումների նախագիծը:

Նախագիծը 09.07.2019թ. ուղարկվել էր փաստաբաններին մինչև 23.07.2019 թվականը առաջարկություններ կամ դիտողություններ ստանալու ակնկալիքով:

Նախագիծը նախքան խորհրդի քննարկմանը ներկայացնելը կքննարկվի 29.08.2019 թվականին, ժամը 18:30-ին՝ Փաստաբանների պալատի մեծ դահլիճում (Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ):

Հրավիրում ենք ձեզ մասնակցելու ակումբի նիստին և միաժամանակ խնդրում ենք առաջարկություններ կամ դիտողություններ ունենալու դեպքում, դրանք գրավոր ներկայացնել մինչև 28.08.2019 թվականը:

Ակումբի նիստի մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի դեոնթոլոգիա դասընթացի վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ, նկատի ունենալով, որ քննարկումը վերաբերում է Փաստաբանի վարքագծի կանոնագրքին:

Բեռնել կանոնագրքի փոփոխությունների լրացումների նախագիծը

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի

Աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })